

ԳՐԱԴԻՍՈՍՈՒԹԻՒՆ, ԱՐԱՏԵԼԱԳԻՏՈՒԹԻՒՆ

«ՄԱՇՏՈՑ» ԾԻՍԱՐԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԽՄԲԱԳԻՌԹՅԱՆ ՎԵՐՀԱՆՈՒՄԸ

Հայ միջնադարյան մատենագրության երկերի վերլուծությունը պետք է խարսխված լինի ոչ միայն այդ գործերի ուսումնասիրության, այլև բնագրային սկզբնական վիճակի վերականգնման եւ ժամանակի ընթացքում կրած փոփոխությունների վերհանման վրա, քանի որ այդ փոփոխությունները պայմանավորված չեն եղել միայն ձեռագրից ձեռագիր գրիչների ընդօրինակությունների ընթացքում առաջ եկած տարբերությամբ: Նման փոփոխությունները հաճախ արդյունք են եղել եկեղեցա-դավանական պայքարի, ընդհանուր աշխարհայացքի եւ գրական ըմբռնումների փոփոխության: Ասվածը վերաբերում է հատկապես եկեղեցա-ծիսական ժողովածուներին, որոնք իրենց հերթին կարելի է բաժանել մի քանի խմբի: Առաջին՝ առավել «մրբազան» եւ կանոնացված բնագիր ունեցող «Շարակնոցը», որը թերեւս բոլորից քիչ է ենթարկվել փոփոխությունների, եւ չհաշված բնագրային բնույթի տարբերությամբ, հիմնականում կանոնացվել է ԺԲ.- ԺԳ. դարերում: Երկրորդ՝ ժողովածուներ, որոնցում կատարված փոփոխությունները պայմանավորված են եղել եկեղեցական «Տօնացոյցի» զարգացման ընթացքով, ինչպես օրինակ հենց «Տօնացոյցը» եւ «Ճաշոցը»: Երրորդ՝ ժողովածուներ, որոնցում առկա փոփոխությունները, բացի տոնացուցային եւ ծիսական փոփոխություններից, մեծապես պայմանավորված են եղել նաեւ գրական լեզվի եւ աշխարհայացքի փոփոխությամբ, որի բնորոշ օրինակն են «Յայսմատուրբը» եւ «Գանձարանը»: Առավելապես կատարվող ծեսի հետ է կապված եւ տարբեր ժամանակաշրջաններում կատարվող ծիսական արարողությունների կենդանի պատկերն է ներկայացնում «Մաշտոց» ժողովածուն:

Ավելին, վերջինիս տարբեր կանոններից յուրաքանչյուրում առկա տարատեսակ փոփոխությունները պայմանավորված են ոչ միայն այս կամ այն արարողության, կյանքի տարբեր բնագավառների հետ կապված օրհնությունների, ժամանակի ընթացքում կրած փոփոխությունների, այլև անգամ այդ արարողությունների՝ ազգագրական տարբեր շրջաններում այս կամ այն կերպ կատարելու հետ: Ահա այս պատճառով բնագրային առումով ամենախայտաբղետ պատկերը ներկայացնում է «Մաշտոց» ծիսարանը, որում առկա տարբերությունների մի զգալի մասը պայմանավորված է ծիսական արարողությունների զարգացման եւ փոփոխությունների ընթացքով: Ուստի վերականգնել «Մաշտոց» ծիսարանի բնագիրը, նշանակում է վերականգնել հայ ծեսի անցած ճանապարհը, որն ունի թե՛ եկեղեցագիտական եւ թե՛ ազգագրական անգնահատելի նշանակություն:

Կարեւոր այս աշխատանքին է ձեռնամուխ եղել Մաշտոցի անվան Մատենադարանի «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» խմբի ղեկավար Գեորգ Տեր-Վարդանյանը, հիմքը դնելով

«Մաշտոց» ծիսարանն իր բոլոր խմբագրություններով և կանոններով հրատարակելու գործին՝ հիմնված ձեռագրային-աղբյուրագիտական հսկայական նյութի վրա: Կատարված աշխատանքը չի սահմանափակվում միայն ներկայացված հատորում թվարկված ձեռագրերով: Վերջիններս իրենց հերթին ընտրված են Մաշտոցյան Մատենադարանի և հայկական ձեռագրային աշխարհի տարբեր պահոցների «Մաշտոց» ժողովածուների ծովից՝ տեղագրական-ժամանակային ու բնագրագիտական որոշակի սկզբունքով: Այսինքն՝ սկզբնապես ֆննվել են «Մաշտոց» ծիսարանի անհամեմատ ավելի մեծ թվով ձեռագրեր և դրանցից ընտրվել են այն համարները, որոնք արդեն նշված են այս հատորի օգտագործված ձեռագրերի բաժնում:

Կատարված այս աշխատանքը հնարավորություն է տվել «Մաշտոց» ծիսարանի բնագրի ձեռավորման ու զարգացման անցած ճանապարհը ենթարկել որոշակի ժամանակային պարբերացումների, որոնցից առաջինին՝ «Մաշտոցի» հնագույն խմբագրությանն է նվիրված աշխատասիրողի այս մեծ ձեռնարկման առաջին հատորի առաջին գիրքը, որը տպագրել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը՝ մեկենասությամբ Գաբրիել Չեմպերճյանի¹:

Այս հատորի առաջին մասը մի ամփոփ ուսումնասիրություն է, ուր ներկայացվում է «Մաշտոց» ծիսարանի զարգացման ընթացքը Դ.-Ն. դարերից մինչև ծիսական կանոնների ամբողջացումը և նորանոր միավորներով համալրվելը ԺԶ.-ԺԸ. դարերում: Յուրաքանչյուր փուլի համար ներկայացվում են ծեսի կանոնների՝ տվյալ ժամանակաշրջանին առավել բնորոշ ձեռագրերը և այն հեղինակները, ովքեր գործուն մասնակցություն են ունեցել ծիսարանի կանոնների խմբագրմանը և նորանոր կանոններով համալրմանը: Մաշտոց Ա. եղիվարդեցի կաթողիկոսից հետո ընդգծվում է հատկապես Ներսես Լամբրոնացու դերը և Լատին ծիսարանի հետ տարբեր կանոնների ունեցած հարաբերակցության հարցը:

Ձեռագրային աղբյուրների վրա հիմնված այս աշխատանքի կարևոր արժանիքներից է և այն, որ ոչ միայն «Մաշտոց» ծիսարանի զարգացման տարբեր փուլերը ներկայացնող ժողովածուներն են բերվում և ֆննվում, այլև հայկական կանոնը պարունակող ձեռագրերից բացի ներկայացվում են լատին ծիսարանի քարգմանության կանոններից, ինչպես նաև խառը՝ հայ-լատին կանոններից կազմված ձեռագրերը և դրանց ազդեցությունը Մաշտոցների վրա, թե նոր կանոնների կազմության և թե ներկանոնային՝ կանոնների ներսում ծիսական տարբեր միավորների հավելմամբ:

«Մաշտոցի» ձեռագրային խմբագրությունների ֆննությունից հետո Գ. Տեր-Վարդանյանը անդրադառնում է և «Մաշտոցի» հրատարակչություններին, սակայն ոչ թե մատենագիտական թվարկման համար, այլ մատնանշելու այն հրատարակչությունները, որոնք ընկած են այսօր կատարվող ծեսի կանոնների հիմքում: Այս առումով աշխատասիրողը առանձնացնում է Կ. Պոլսի 1722 և 1807 թթ. հրատարակչությունները, 1830 թ. Վենետիկի և Ֆ. Կոնիքերի 1905 թ. անգլերեն քարգմանությամբ հրատարակչությունները: Այս շարին գումարում է Վենետիկի Մխիթարյանների «Մայր Յուցակի» երրորդ հատորը, որն ամբողջապես նվիրված է Ս. Ղազարի ձեռագրային հավաքածուի «Մաշտոցներին»: Արժեւորվում են նաև Հ. Ս. Ճեմենյանի՝ «Մաշտոց» ծիսարանի տարբեր կանոններին նվիրված ուսումնասիրությունները:

1 «Մայր Մաշտոց», հր. Ա., գիրք Ա., աշխատասիրությամբ Գեորգ Տեր-Վարդանյանի, Ս. Էջմիածին, 2012, 920 էջ:

Ծավալուն առաջաբանի վերջին բաժինը նվիրված է այս հատորում «Մաշտոցի» հնագույն խմբագրության կանոնների կազմության համար հիմք ծառայած Ս. Ղազարի հմր. 457/320 հնագույն Մաշտոցի եւ Երեւանի Մատենադարանի հմր. 1001 ձեռագրի ձեռագրային ֆննդությանը:

Աղբյուրագիտական եւ ձեռագրա-հնագրական տվյալների հիման վրա եւ վերջիններս առնչելով Ժ.-ԺԱ. դարերի հայ եկեղեցական կյանքի մի շարք իրողությունների հետ, հետազոտողը եզրակացնում է, որ Ս. Ղազարի հնագույն այս «Մաշտոցը» պետք է գրված լինի Անանիա Ա. Մոկացու (կրթ. 946-968 թթ.) կաթողիկոսության շրջանում, երբ առանձնակի էր շեշտվում Մյուսոնի օրհնության՝ բացառապես հայրապետական իշխանությանը վերապահված լինելը: Այդ պատճառով Մյուսոնի օրհնության կանոնի փոխարեն այս ձեռագրում բերված է միայն կանոնի անվանումը եւ գրչի կողմից գրված է, թե այս կանոնը չի համարձակվում գրել, որպեսզի անհնազանդ չլինի հայրապետին: Հետազոտողը, ելնելով գրչի այս ծանուցումից, ենթադրում է, որ այն պետք է գրված լինի կաթողիկոսարանին՝ Արգինային մերձ որեւէ տեղ, այլապես գրիչն ավելի ազատ կարող էր լինել, ուստի ենթադրում է, որ հիշյալ ձեռագիրը գրվել է Անիի մերձակայքում: Երեւանի Մատենադարանի հմր. 1001 ձեռագիրն էլ ֆննդության նույն եղանակով թվագրում է ԺԱ. դարով:

Հետազոտողը ավստոսանքով նշում է, որ որպես երրորդ ձեռագիր կարող էր օգտագործվել 12-րդ դարում՝ 1180-ական թվականներին գրված Հռոմոսի «Մաշտոցը»: Այս ձեռագրի լուսապատկերները, սակայն, հնարավոր չի եղել ստանալ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանից:

Հայոց եկեղեցու ծիսա-արարողական ժողովածուների եւ մատենագրական երկերի հրատարակությունների ժամանակ ներկայացվող բնագրերին զուգահեռ կարելուով են այդ բնագրերում առկա սուրբգրային հատվածները, որոնք հնարավորություն են տալիս այդ հատվածները համեմատել «Աստվածաշնչի» հայկական թարգմանության բնագրի հետ եւ նշել բնագրային տարբերությունները: Այս նպատակով «Մաշտոց» ծիսարանի հնագույն խմբագրության կանոնների սուրբգրային ընթերցվածները համեմատվել են 1805 թ. Զոհրապյան հրատարակության համապատասխան հատվածների հետ եւ տողատակում նշվել են եղած բնագրային տարբերությունները:

Առաջաբանում հետազոտողը մատնանշել է «Մաշտոց» ծիսարանի զարգացման ընթացքի բնագրային հաջորդ խմբագրությունները կազմելու եղանակը: Արդյունավետ չի համարում խմբագրությունների միջեւ առկա տարբերությունները բնագրային տարբերվածների միջոցով ներկայացնելը, քանի որ վերջինս խնդրված տողատակերով դժվարեցնում է դրանց համեմատությունը եւ զարգացման ընթացքին հետեւելը: Ահա այս պատճառով առաջարկվում է «Մաշտոցի» համեմատական բնագրի եռասյուն հրատարակությունը, որի յուրաքանչյուր սյունը կներկայացնի ծիսարանի զարգացման երեք փուլերից մեկը եղող համապատասխան խմբագրությունը: Այս դեպքում, ինչպես նշում է հետազոտողը, թեեւ «սյունի մեջ կարող են մեծ բացատներ առաջանալ, բայց շարունակող-հետազոտողը հստակ պատկեր ստանալու համար անհրաժեշտ լրացուցիչ աշխատանք անելու հարկադրանքից ազատված կլինի» (էջ 47): Այսպիսով, յուրաքանչյուր կանոն կներկայացվի իրար զուգահեռ ընթացող խմբագրություններով, ու կերեւա կանոնի զարգացման եւ նորանոր միավորներով ու ծիսական արարողություններ

րով հավելվելու ընթացքը: Բնագրային տարբերությունները նման սյուներով ներկայացնելու դեպքում հնագույն խմբագրության սյունները շատ տեղերում դատարկ կմնան, քանի որ բոլոր կանոններում մի շարք միավորներ աստիճանաբար հավելվել են հետագայում:

Ասվածն առավել ցայտուն է երևում զրբի երկրորդ՝ «Բնագիր» բաժնում, ուր «Մաշտոցի» հնագույն խմբագրությունն է՝ կազմված Բառասունուր կանոններից, ինչպես ասացինք, հիմնված Վենետիկի հնագույն «Մաշտոցի» ու Երեւանի Մատենադարանի հմր. 1001 ձեռագրի վրա:

Հիշյալ կանոնների մի զգալի մասը կենսունակ է եւ կիսովում է նաեւ այսօրվա եկեղեցական կյանքում: Այս կանոնների այժմյան բնագրերի մոտիկ համեմատությունը հնագույն խմբագրության համապատասխան կանոնների հետ, արդեն ուրվագծում է սյունակային այդ կառուցվածքը՝ առկա եւ հետագայում հավելված միավորներով եւ ծիսական արարողություններով ու խրատներով:

«Մաշտոցում» ձեւավորված ավանդույթով կանոնները ոչ թե մեխանիկական հաջորդակետությամբ են բերված իրար հետեւից պատահական ընթացքով, այլ որոշակի խմբավորմամբ եւ խմբերի մեջ էլ՝ ըստ ծիսական գործողությունների զարգացման ընթացքի: «Մաշտոցների» բնագրի մոտ հազարամյա ընթացքը ձեռագրերով եւ սպագիր օրինակներով ցույց է տալիս, որ հնուց մինչեւ այսօր որոշակիորեն ձեւավորված ավանդույթով այն բաժանվում է մի շարք կանոնախմբերի: Հնագույն խմբագրությունում այն կարելի է բաժանել իրարահաջորդ հետեւյալ խմբերի.

ա. եկեղեցու եւ եկեղեցական սպասքի օրհնության հետ կապված կանոններ:

բ. Մատաղի եւ մեջեցյալների հիշատակին նվիրված կանոններ, որոնց կատարումը ուղեկցվում է ծիսականացված ճաշկամար: Այս կանոնների առանցքում գտնվում է Հոգեհանգստյան կամ մեջեցյալների հիշատակի կանոնը:

գ. Մարդկային կյանքի ընթացքը ներկայացնող՝ մկրտությանը, պսակին եւ թաղմանը նվիրված կանոնախմբեր:

Ամուսնության կանոնաշարի հնագույն խմբագրությունում կա երեք կանոն, որոնցից առաջինը իսա՜յ փոխի՝ «Կանոն խաչ փոխել» նշանադրության կանոնի սկզբնական օրինակն է: Այս կանոնում նշանի մատանու օրհնության եւ նշանածին տալու փոխարեն նշանվողները խաչն էին ձեռքից ձեռք փոխանցում, որտեղից եւ իսափոխ անվանումը: Իսաչի՝ ձեռքից ձեռք փոխանցելը երկու խորհուրդ ուներ. առաջին՝ ամրություն հաղորդել սպասվող ամուսնական միությանը, եւ երկրորդ՝ ձեռքից ձեռք փոխանցվող խաչը ամուսնացողների մտքից վաներ մեղավոր մտածումները, նրանց մղելով սիրո եւ միության: Այս կանոնում եկեղեցու հիմնարկեփ՝ նավակատիփի հետեւողությամբ նշանադրությունը անվանվում է ամուսնության նավակատիփը: Առաջին դարերի Բրիտանական ըմբռնմամբ՝ ինչպես որ եկեղեցու հայրերը մեծում էին երկրորդ ամուսնությունը, այնպես էլ այս շարքում չկա երկրորդ պսակի կանոնը:

Նույն ձեւով աշխարհականի թաղման կարգը ներկայացված է երկու կանոնով՝ Թաղման եւ Թաղման երկրորդ օրվա: Այստեղ բացակայում են հաջորդող շրջանում ձեւավորված յոթի, Տղայաթաղի, Տղայաթաղի երկրորդ օրվա եւ յոթի կանոնները:

Այս հատորում ձեռագրային նյութի համակողմանի ներկայացումն, ասես, հուշում է նաեւ ծիսարանի զարգացման հետագա ընթացքը: Այսպես, կանոնների բնագրային տարբեր-

վածներից բացի սողատակերում բերված են նաև կանոնների խորագրերին վերաբերվող լուսանցային նշումները, որոնցում մեկ բառով կամ բառակապակցությամբ բնորոշվում է տվյալ կանոնը: Հաջորդող շրջանում նման բնորոշումների մի մասը դառնում է կանոնի նոր անվանումը, ինչպես Թադման երկրորդ օրվա կանոնը Վենետիկի հնագույն ձեռագրի ստորին լուսանցային նշման մեջ անվանվում է «Այգալաց», իսկ Երեւանի Մատենադարանի հմր. 1001 ձեռագրում «Այգոյն», որոնց հիման վրա այս կանոնն արդեն հաջորդող դարերում անվանվում է «Այգուց»:

դ. Վանական տարբեր կարգերի եւ աստիճանների տվյալյան կարգն է ներկայացված սխեմ տալու կանոնում, որն հետագայում տրոհվելու էր մի քանի կանոնների:

ե. Առանձին մի խումբ են կազմում ջրի եւ յուղի օրհնության կանոնները, որոնք խմբված են Ավագ Հինգշաբթիին կատարվող Ունըվայի արարողության շուրջ:

զ. Բերի պահպանությանը եւ պղծյալ կերակուրին վերաբերվող կանոններ:

է. Եկեղեցու նվիրապետության տարբեր աստիճաններին՝ գրակարդացից մինչեւ քահանայի ձեռնադրություն, նվիրված կանոններ:

ը. Քահանայի եւ եպիսկոպոսի թաղման ծավալուն կանոնը, որն այնուհետեւ տրոհվել է առանձին կանոնների:

«Բնագրային հավելվածներ» բաժնում բերված են վերջին այս կանոնի հնագույն խմբագրության հետ կապված եւս երկու տարբերակներ: Այս բաժնում բերված է նաև հնագույն խմբագրության գրության ժամանակ արդեն ձեւավորված Մյուտոնի օրհնության կանոնը:

Բնագրային հավելվածների հաջորդ երկու՝ չորրորդ եւ հինգերորդ միավորները վերաբերվում են «Մաշտոց» ծիսարանի ձեւավորման ակունքում գտնվող «Կարգաւորութիւն արհմութիւնաբեր ցուցակի» եւ ծիսարանը կանոնավորած ու տարբեր կանոնները մի մատյանի ներքո ժողոված Մաշտոց Ա. եղիվարդեցու վարին:

«Օրհնութիւնաբեր ցուցակում», ինչպես հայտնի է, թվարկվում են «Մաշտոցի» կանոնները եւ նշվում է, թե համաձայն ավանդության՝ այդ կանոններից որն է այս կամ այն հեղինակը իր հետ բերել եւ կամ էլ ինքը գրել: Անկախ գրության ժամանակից եւ հեղինակային պատկանելության հարցից, այս ցուցակն ակնհայտորեն ստեղծվել է «Մաշտոցի» հնագույն խմբագրության շրջանում: Այս պատճառով շատ կարեւոր է կազմել նրանում առկա կանոնների ցանկը եւ այն համեմատել հնագույն խմբագրության մեջ եղած կանոնների հետ: Գետրգ Տեր-Վարդանյանը նման համեմատության երկու ցանկ է կազմել: Առաջին՝ «Օրհնութիւնաբեր ցուցակի» մեջ հիշված այն կանոնների, որոնք կան հնագույն խմբագրությունում, ինչպես եւ այն կանոնների, որոնք բացակայում են այնտեղ: Երկրորդ՝ հնագույն խմբագրությունում եղած այն կանոնները, որոնք հիշված չեն «Օրհնութիւնաբեր ցուցակում»:

Այս գործի 25 տպագիր եւ ձեռագիր օրինակների հիման վրա կազմված բնագրում տարբերակները սողատակում նշելու փոխարեն յուրաքանչյուր դրվագն ու հիշատակված ամեն մի կանոն միասնական բնագրի շրջանակում բերվում են համապատասխան բաժանմամբ առանձին առանձին, որոնցից յուրաքանչյուրում բնագրային տվյալ հատվածը իրարահաջորդող ընթացքով ներկայացվում է ըստ հիշյալ 25 ձեռագիր եւ տպագիր աղբյուրների:

Բնագրային հավելվածների շարքը խորհրդանշական ձեւով, ինչպես ասացինք, ավարտ-

վում է «Մաշտոց» ծիսարանի առաջին ամբողջական կազմող-խմբագիր Մաշտոց Ա. Եղիվար-դեցու վարժի բնագրի նոր հրատարակությամբ եւ վերստին ձեռագրային մեծ ընդգրկմամբ նյութի հիման վրա:

Ընդունված կարգով յուրաքանչյուր ծիսական կանոնի բնագիրը կազմված է հետեւյալ երեք խմբի միավորներից.

Ա. Ծիսական հրահանգ-խրատներ եւ ծեսի կատարման նկարագրություն:

Բ. Տվյալ կանոնի ֆահանայական աղոթքներ եւ սարկավագի ֆարզներ:

Գ. Սուրբգրային ընթերցվածներ:

Ծիսական խրատներն ըստ էության առանձին միավորներ չեն, այլ ծեսի կատարման ընթացքի նկարագրություններն են, որոնք ընդլայնվել, կրճատվել կամ տարաբնույթ փոփոխությունների են ենթարկվել «Մաշտոց» ժողովածուի եւ վերջինիս տարբեր կանոնների խմբագրություններում: Ինչ վերաբերում է աղոթքներին ու ֆարզներին եւ սուրբգրային ընթերցվածներին, ապա նրանց բնագրային տարբերությունները ձեռագրային տարընթերցվածներ են եւ ոչ թե պայմանավորված են ծիսարանի ներքին զարգացմամբ եւ կրած փոփոխություններով: Ահա այս պատճառով հատորի աշխատասիրողը ցանկերի բաժնում այբբենական առանձին ցանկերով բերել է այս միավորների սկսվածքները, շնորհիվ որոնց հետազոտողները, առանց լրացուցիչ որոնումներ կատարելու, իսկույն կարող են գտնել, թե արդյո՞ք այս կամ այն կանոնն ունի՞ տվյալ աղոթքը, թե ոչ, եւ կամ այն ընդհանրապես հանդիպո՞ւ է հնագույն խմբագրության որեւէ կանոնում:

Համանման ձեռով երկու ցանկերով բերված են կանոններում առկա սուրբգրային ընթերցվածները: Առաջինում տվյալ հատվածի սկսվածքի այբբենական ընթացքով ցանկը հնարավորություն է տալիս ճշտել, թե տվյալ հատվածը կա՞ այս կանոնաշարի որեւէ կանոնում: Երկրորդ ցանկում տարբեր կանոններում առկա ընթերցվածների՝ արդեն ըստ «Աստվածաշնչի» գրքերի ընթացքի դասավորմամբ ներկայացնելը ցույց է տալիս, թե «Մաշտոցի» կանոններում Ս. Գրքի որ գրքերը եւ անգամ հատվածներն են բոլորից հաճախադեպ, եւ որ կանոններում են կիրառվել: Հնագույն խմբագրությունը, ֆանի որ հարաբերվում է Թ.-Ժ. դարերի հետ, ուստի նման ցանկը կարեւորվում է նաեւ Սուրբ Գրքի հայկական կանոնի ձեւավորման պատմության տեսանկյունից, թե այդ շրջանում որ գրքերն են կանոնացված եղել, որոնցից առանձին հատվածներ, որպես ընթերցվածներ, տեղ են գտել ծիսարանի կանոններում:

«Մաշտոցի» հնագույն խմբագրությունը ամբողջացնում են կանոնացանկային ութ հավելվածները, որոնցից առաջինը Վենետիկի հնագույն ու Երեւանի Մատենադարանի հմր. 1001 «Մաշտոցում» առկա կանոնների եւ Հոռոմոսի արդեն հիշված «Մաշտոցի» կանոնների համեմատությամբ է նվիրված: Երկրորդում թվարկվում են տարբեր ձեռագրերում պահպանված այն կանոնները, որոնք ներսես Լամբրոնացին թարգմանել է Լատին ծիսարանից, որն իր հերթին ցույց է տալիս հայկական կանոնների հարաբերակցությունը լատին ծեսի հետ: Երրորդ եւ չորրորդ հավելվածներում բերված են Սսեցոց եւ Էջմիածնում (այժմ Երեւանի Մատենադարանում պահվող) եւ հնագույն խմբագրության հետ հարաբերվող մաշտոցների կանոնները:

Հետազոտողի աշխատանքն առավել դյուրացնելու համար, որպեսզի պարզ լինի Մայր մաշտոցների որ կանոններն են, որ բացակայում են հնագույն խմբագրությունում, հիմնգերոդ

հավելվածում բերված են այդ կանոնները եւ յուրաքանչյուրի ներքո թվարկվում են կանոնները պարունակող ձեռագրերը՝ կանոնի խորագրի եւ սկսվածքի նկարագրությամբ:

Առավել ընդլայնելով բոլոր այս մաշտոցների կանոնանշարների համեմատությունը, աշխատասիրողը հնագույն խմբագրության երկու՝ Հոռոմոսի եւ տասնհինգ Մայր Մաշտոցների կանոնացանկերի համադրական աղյուսակն է ներկայացնում վեցերորդ հավելվածում, որի համար որպես համեմատության հիմք է ընտրվել Վենետիկի հնագույն Մաշտոցը:

Այս շարքի կանոնացանկային նախավերջին միավորը Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Մատթեոս վրդ. Մաղաֆյանի 1830 թ. գրված աշխատանքն է՝ նվիրված դարձյալ Վենետիկի հնագույն Մաշտոցին, որ գրվել է իններորդ դարում: Եւ վերջապես, գիրքը եզրափակվում է տպագիր Մաշտոցների մատենագիտությամբ, որով մատենագիտական տարբեր ցանկերից ի մի են մեկտեղված այս ժողովածուի հրատարակությունների համառոտ նկարագրությունները:

Գրքի հիմնական մասին՝ հնագույն խմբագրության կանոնների բնագրին զուգահեռ ծավալուն առաջաբան-ուսումնասիրությունը, ինչպես նաեւ բնագրին հաջորդող ցանկերն ու հատվածները ոչ միայն ամբողջացնում են հնագույն խմբագրությունը եւ վերաբերվում են վերջինիս հետ կապված տարաբնույթ հարցերի լուսաբանմանը, այլեւ գծագրում են այս աշխատանքի երկրորդ հատորի կազմության սկզբունքները, որը ներկայացնելու է հնագույն խմբագրության շրջանակում ծեսի զարգացման հաջորդ աստիճանը: Ուստի ժ. դարի պատկերն արտահայտող այս գիրքը ոչ թե պարզապես նշված է որպես հտ. Ա., այլ «Հտ. Ա., Գիրք Ա.»:

Այս հատորի երկրորդ գրքի, որով եւ հնագույն խմբագրության բնագրային ընդլայնված տարբերակի հրատարակության մասին Գ. Տեր-Վարդանյանը գրում է. «Ըստ այսմ՝ այս Ա. հատորի Բ. գրքով ապագայում պետք է հրատարակվեն մեր պատկերած 15 Մայր մաշտոցներում առկա նույն 46+1 կանոնների ճոխացված-ընդարձակված տարբերակները: Այս ձեռով՝ միեւնույն կանոնների նախնական պարզ եւ փոփոխված տարբերակներն առանձին գիրք-պրակներով հրատարակելը նպատակ ունի հստակ (ոչ խառն-խնդրված տողատակերով) պատկերելու ծեսի զարգացման ընթացքը եւ դրանով իսկ դյուրացնելու հետագա հետազոտությունները» (էջ 12):

Հետզոտողը նշում է, որ մեկ հատոր էլ պետք է կազմեն «Մայր Մաշտոցի նույն 15 օրինակներում առկա եւ այս պրակի մեջ չընդգրկված թվով 70-ից ավելի կանոնների միատեղումը»: Հաջորդ հատորը պետք է նվիրված լինի կաթողիկոսական Մաշտոցի կանոններին: Ամփոփելով, ասենք, որ շնորհիվ նման աշխատանքի՝ ոչ միայն վերականգնվում է «Մաշտոց» ծիսարանի հնագույն բնագիրը եւ հետազոտական ամփոփ պատկերով մատնանշվում ծիսարանի բնագրա-կանոնային սկզբնական վիճակը, այլեւ ներկայացվում են այն սկզբունքներն ու եղանակները, որոնցով պետք է առաջնորդվեն հետազոտողները այս ժողովածուի բոլոր խմբագրությունների եւ կանոնների ամբողջական բնագիրը կազմելիս, որպեսզի այն արձանագրի պատմական զարգացման ընթացքում առաջ եկած կառուցվածային, ծիսա-եկեղեցական եւ ձեռագրա-տարընթեցվածային բոլոր փոփոխությունները եւ տարբերությունները: